

ՀՏԴ.159.9

Հոգեբանություն

**Իննա Մկրտչյան**

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս, ԱրՊԿ

E-mail: [inna.mkrtchyan.1980@mail.ru](mailto:inna.mkrtchyan.1980@mail.ru)

**ԴԵՊՐԻՎԱՑԻԱՅԻ ԵՐԵՎՈՒՅԹԸ ԱՆԲԱՐԵՆՊԱՍ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ**

Ծնողների և երեխայի միջև անբավարար հարաբերությունները կարող են ներքին հոգեբանական խոշոշունների արդյունք հանդիսանալ: Որպես կանոն հոգեբանական խոշոշունները լինում են ավելի խորը, բարդ և դժվար հաղթահարենի, քան արտաքին հասարակական հանգամանքները: Սակայն շատ հաճախ պայմանների այս երկու տեսակները՝ արտաքինը և ներքինը, ամենատարբեր կերպով միավորվում և փոխակապակցվում են, այնպես որ պրակտիկայում դրանք հազվադեպ կարելի է վստահորեն տարբերակել:

**Հանալի բառեր՝** դեպրիվացիա, անբարենպաստ ընտանիք, հոգեբանական վիճակ, հոգեբանական մթնոլորտ, անտեսում, կապվածություն, զերմ հարաբերություններ

**I.Mkrtchyan**

**ФЕНОМЕН ДЕПРИВАЦИИ В НЕБЛАГОПОЛУЧНОЙ СЕМЬЕ**

Неудовлетворительные отношения между родителями и детьми могут вызвать внутренний психологический барьер. Как правило, умственные препятствия глубже, сложнее и труднее преодолевать, чем социальные обстоятельства. Тем не менее, более часто эти два типа условий, внутренний и внешний, разными способами объединяются и взаимосвязываются, поскольку на практике их редко можно уверенно дифференцировать.

**Ключевые слова.** депривация, неблагополучная семья, эмоциональное состояние, психологическая атмосфера, пренебрежение, привязанность, теплые отношения

**I.Mkrtchyan**

**THE PHENOMENON OF DEPRIVATION IN AN DYSFUNCTIONAL FAMILY**

Unsatisfactory relations between parents and children may cause inner mental barrier. As rule mental obstacles are deeper, complicated and difficult to overcome than outer social circumstances. Yet more often these two types of conditions inner and outer, in most different manner are united and mutually arranged as it is in practice occasionally can be differentiated.

**Keywords.** deprivation, dysfunctional family, emotional state, psychological atmosphere , neglection, affection, warm relations

Այն փաստի արձանագրումը, որ դաստիարակությունը մանկական հաստատություններում և ծնողներից բաժանումը երեխայի զարգացման մեջ հաճախ լուրջ խաթարումների է բերում, հանգեցրեց մի շարք եզրահանգումների:

Մանկական հաստատություններում դաստիարակությունը միանգամից վերածվեց դեպրիվացիոն իրավիճակի՝ մողենի, մինչդեռ ընտանեկան դաստիարակությունը հայտարարվեց որպես դեպրիվացիայից միակ հուսալի պաշտպանություն: Սա բարձրածայնում էր. <<Լավ է վատ ընտանիքը, քան լավագույն մանկատունը>> կարգախոսը:

Մանկատներում և անբարենպաստ ընտանիքներում դաստիարակվող երեխաների մասին որոշ փաստեր խոսում են այսպիսի եզրակացության օգտին:

Հայ երեխաներ ապրում են այնպիսի ընտանիքներում, որտեղ սպառնալիքի տակ է ոչ միայն նրանց դաստիարակությունը, այլև՝ ուղղակիորեն կյանքը: Դրակտիկան, որ լայն տարածում էր գտնել հոգեբան դեպրիվացիայի մասին հետազոտությունների ազդեցության տակ, հաճախ բերում էր նրան, որ երեխաներին թողնում էին այդպիսի անբարենպաստ ընտանիքներում, ընդ որում բոլոր սոցիալական ձգտումներն ուղղված էին զանկացած պայմաններում ընտանիքի ամբողջականության պահպանմանը: Քանի որ ընտանիքն հետևելը հազվադեպ էր բավարար հետևողական լինում, երեխաները երկար տարիներ մնում էին բոլորովին անբարենպաստ միջավայրում: Այսպիսով հարց է

ծագում. զգու՞մ է արդյոք նրենսան և ինչպիսի՞ պայմաններում է զգում իր հիմնական հոգեկան պահանջմունքների անբավարարվածությունը ընտանիքում:

Այս հարցը պրակտիկորեն բարձրացրել է Բոուլբի՝ մայրական դեպրիվացիայի առաջնային կոնցեպցիայի շորջ մտածելիս, ընդ որում բայ նրա ընտանիքի միջավայրում կարող են ծագել պայմաններ, որոնք մանկատների պայմաններից էականորեն չեն տարբերվում, և որ նրենսան կարող է տառապել մորից անջատումից՝ սեպարացիայից, չնայած նրանից ֆիզիկապես առանձնացած չէ: Բոուլբին ներթարում է նաև, որ մանկատներում նրենսային սպառնում է ավելի շատ դեպրիվացիա և ավելի քիչ հոգական կոնֆլիկտներ, մինչդեռ ընտանիքում՝ հակառակն է: Նա առաջարկում է առանձնացնել զուտ դեպրիվացիան, պայմանավորված մոր և նրենսայի միջև շփման անբավարարությամբ, խաթարումներ կապված այդ կապի խնդարյուրումների հետ, ինչպես նաև խաթարումներ կապված այդ կապի խզման հետ:

Ծփում է, այս տեսակնետը կիսում է նաև Շպիզը, ով վաղ մանկության պսիխոպաթոլոգիայի մեջ տարբերում է խանգարումներ անբավարարության (դեպրիվացիոն) պատճառներով, որոնք առաջանում են մոր իրական բացակայությունից, և հոգետորսիկ խանգարումներ, որոնք պայմանավորված են մոր վերաբերմունքով, որը չի կրում համապատասխան բնույթը:<sup>2</sup>

Մեր սեփական փորձի վրա կարող ենք միայն ավելացնել, որ առանձին դեպրերում ընտանիքներում կարենի է հանդիպել և ազդակներով ոչ բավարար ապահովում, և կապերի խաթարումներ, ինչպես նաև հաճախակի սեպարացիաներ, ընդ որում դժվար է հասկանալ, թե ինչն է ազդել սկզբում, ինչը՝ ավելի ուշ, որն է որոշիչ նորի, իսկ որը դրա հետևանքը: Ընտանիքում նրենսայի էմոցիոնալ վիճակը, որպես կանոն լինում է զգալիորեն ավելի բարդ, քան մանկական հաստատությունում. նրենսայի հանդեպ ծնողների գրաված դիրքը նաև անբարենպաստ պայմաններում լինում է առավել խնտենսիվ, ավելի խորը պատճառավորված և ավելի անհատականացված: Սակայն, չնայած այս ամենին, մենք կարծում ենք, որ նպատակահարմար կլինի փորձել զույց տալ ընտանեկան այն իրադրությունները, որոնց պայմաններում կարող է ծագել դեպրիվացիա: Այդ պայմանները կարենի է բաժանել նրկու խմբի:

Առաջին հերթին դրանք այնպիսի պայմաններ են, երբ արտաքին պատճառներով ընտանիքում տիրում է սոցիալ-հոգական ազդակների բացարձակ անբավարարություն, որոնք անհրաժեշտ են նրենսայի առողջ զարգացման համար: Սա տեղի է ունենում, օրինակ, այնպիսի ընտանիքներում, որտեղ ծնողները օրվա մեծ մասն անցկացնում են տնից դուրս, որտեղ ընտանիքի տնտեսական կամ մշակութային վիճակը այնքան ցածր է, որ նրենսայի մոտ բացակայում է զարգացման խթանը:

Երկրորդ դեպքում լինում են իրավիճակներ, երբ վերոնշյալ ազդակները ընտանիքում առկա են, բայց նրենսայի համար դրանք անհասանելի են, քանի որ նրան դաստիարակող անձանց հետ հարաբերություններում ձևավորվել է որոշակի ներքին, հոգեկան խոշնդրություն: Վերջինս խոշնդրութում է պահանջմունքների բավարարմանը, չնայած բավարարման առյուրը գրեթե ձեռքի տակ է գտնվում: Սա հանդիպում է լիարժեք ընտանիքներում, հաճախ լիովին բարենպաստ հասարակական և մշակութային դիրք ունեցող, որտեղ մայրը, սպական, ինչպես նաև հայրը և մյուս դաստիարակող անձինք հոգականորեն լրիվ անտարբեր են, նրանք կապված չեն նրենսայի հետ, նրան բավարար ուշադրություն չեն հատկացնում: Ինչպես դա արդեն առաջ է քաշվել, նրկու նշված իրավիճակները հաճախ խաչվում են. օրինակ մայրը այնքան է զբաղված, որ չի հասցնում իր հարաբերությունները հաստատել նրենսայի հետ; իր ամբողջ հետաքրքրությունը տալով մասնագիտության՝ նա չի օգտագործում նույնիսկ այն սահմանափակ ժամանակը, որը նրա մոտ փաստացիորեն մնում է նրենսայի համար; դա կարող է լինել նաև միայնակ մոր նրենսա, ում հայրը բացակայում է և ով հաճախ տառապում է մոր մերժողական վերաբերմունքից, որը նրա վրա է տեղափոխում բարդ սոցիալական իրադրության հետևանքով առաջացած հիանալիքության զգացումը: Այս նրկու խմբերի տարբերակումը պրակտիկ նշանակություն ունի: Հարցը նրանում է, որ առաջին դեպքում արդյունքները ավելի մակերենսային են լինում, իսկ շտկումը առավել հեշտ, քան այն իրադրություններում, որտեղ դեպրիվացիան առաջանում է լուրջ հոգեբանական խոշնդրությունը:<sup>3</sup>

Հոգեբանորեն որոշիչ է ոչ թե ընտանիքի իրավաբանական միասնությունը կամ անջատումը, այլ ավելի շուտ ներքին միասնության բացակայությունը:

Ընտանիքը ժամանակակից հասարակության մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում նրենսայի հոգեկան զարգացման հարցում: Նրա յուրաքանչյուր անդամ իրականացնում է ինքնարբերական ձևով

<sup>1</sup> Боулби, Дж. Создание и разрушение эмоциональных связей - 2 -е изд. - М.: Академический Проект, 2005 г.стр.59-62

<sup>2</sup> Шпиц, Р.А. Психоанализ раннего детского возраста - М.: ПЕР СЭ; СПб.: Университетская книга, 2001г. стр. 110-112

<sup>3</sup> Л. Ф. Обухова, О. А. Шограева "Семья и ребенок: психологический аспект детского развития" Москва 1994г.стр.44-47

ծագած դերը և բավարարում է նրելսայի պահանջմունքները՝ ֆիզիկական, հոգական, ինտելեկտուալ և բարոյական: Սկզբնական շրջանում այդ դերը կատարում է մայրը, ով ոչ միայն հոգ է տանում նրելսայի առաջնային պահանջմունքների բավարարման համար, այև նրան տալիս է առաջին ինտենսիվ հոգական ազդակներ՝ նրան գրկելով, սիրելով, ժպտալով և հետը խոսելով: Հոր դերը, որը իրենից ներկայացնում է վարքի որոշակի օրինակ, նաև վստահության և հեղինակության առյուր, գիտակցվում է ավելի ուշ տարիքում, սակայն կարևոր է արդեն վաղ տարիքից սկսած: Չի կարելի շրջանցել նաև քոյքնի և նորայրների նշանակությունը: Ընտանիքի ընդհանուր միանությունը, որն ինտենսիվորեն ձևափոր է երեխայի զարգացող անձնավորությունը, ակնհայտ կախվածության մեջ է գտնվում ընտանիքի բոլոր անդամների համատեղ կյանքի անընդհատ սերտ շփումից:

Երեխայի զարգացման համար, հատկապես վաղ տարիքում, վտանգ է առաջանում այն ժամանակ, երբ չկա մայրը՝ <<մայրական դեպքիվացիա>>: Մորից է կախված նրա հոգեկան պահանջների մեծ մասի բավարարումը, նաև իրենից ներկայացնում է մարդկանց հետ երեխայի հարաբերությունների հիմք, աշխարհի հանդեպ վստահության գրավական:<sup>1</sup>

Զգալիորեն ավելի հաճախ, չնայած որ ոչ այնքան ողբերգական պայման է հանդիսանում հոր բացակայությունը՝ <<հայրական դեպքիվացիան>>: Սա վերաբերում է շատ երեխաների, ովքեր ապրում են իրենց չամուսնացած կամ այլ պատճառներով միայնակ մնացած մայրերի հետ: Եթե չկա հոր ոչ աջակցող, ոչ էլ հավասարակշռող ազդեցությունը, ապա բնականաբար մոր անձի նշանակությունը շատ ավելի է բարձրանում, քան նորմալ պայմաններում է: Ինչպես ցոյց են տալիս սովորական փորձը և սոցիոլոգիական ուսումնասիրությունները, ընտանիքում հոր ֆունկցիաները արագ և լուրջ փոփոխություններ են կրում: Ժամանակակից հասարակության մեջ, իհարակե ոչ հավասարապես բոլոր շերտերում, սակայն այնուամենայնիվ նկատելի է՝ հայրերը ավելի շատ, քան առաջ մասնակցում են կրծքի երեխային խնամելուն, նրա դաստիարակությանը, ընդ որում կնոջ և տղամարդու միջև ընտանիքում համագործակցություն է սկսվում, ինչպիսին նախորդ սերնդում չի եղել: Այս սոցիալական զարգացման ֆոնի վրա հոր բացակայությունը արտահայտվում է ավելի ծանր, քան առաջ էր: Խոսքը այստեղ ոչ միայն ֆիզիկական աշխատանքի և ժամանակի մասին է, այլ առաջին հերթին հոգեկան ծանրաբենիվածության մասին, երբ միայնակ մայրը իր աշխատանքային դիրքը համեմատում է ուրիշ կանանց հետ:<sup>2</sup>

Ծատ ավելի կարևոր կարող է լինել սոցիալական ներգրավման մեջ վստահության և կայունության բացակայությունը, քանի որ հոր մասնագիտությունը սովորաբար իրենից ներկայացնում է ընտանիքի տնտեսական ապահովության իրական և սիմվոլիկ հիմք, իսկ նրա կայունությունը՝ վստահության հենարան: Այս ժամանակ, երբ մայրը երեխային հնարավորություն է ընձեռում զգալ մարդկան սիրո ողջ խորությունը, հայրը երեխայի համար ուղի է հարթում դեպի մարդկային հասարակությունը:

Ընտանիքի նորմալ կառուցվածքի մեջ են մտնում նաև քոյքները և ներբայաները: Նրանց ներգործությունը երեխայի զարգացման վրա չնայած նույնքան մեծ չէ, որքան ծնողներինը, սակայն նկատելի է որոշ դժվարությունների ժամանակ այնպիսի երեխաների մոտ, ովքեր գրկված են եղել քոյքների և նորայրների հետ շփումից: Նրանք սկզբում ներգործում են զգայական ոլորտի, իսկ ավելի ուշ հոգական և սոցիալական ոլորտների վրա: Համատեղ խաղի հնարավորությունները, ընդհանուր խաղալիքները, քաղցրենքնը, ծնողների ուշադրությունը, ամենօրյա վեճների լուծումները, մրցակցությունը և խանդը պայմանավորում են երեխայի առողջ զարգացումը և հեշտացնում հասարակության մեջ նրա հնտեղրացիան:

Երեխայի հետ անբավարար հոգական մտերմության հոգեբանական պատճառները կարող են լինել տարբեր ձևերի, աստիճանի և որակի: Երբեմն խոսքը իրադրության չիմացության կամ ոչ ճիշտ մեկնաբանության մասին է, երբեմն մի փոքր բարձր աշխատանքային փառասիրության մասին, որը հնուացնում է երեխայից, երբեմն հետաքրքրությունների որոշակիորեն յուրօրինակ մակարդակի մասին: Հարցը կարող է վերաբերվել և ավելի լուրջ խնդիրների՝ մոր հոգեկան հիվանդություն, նրա ինտելեկտուալ կարողությունների ցածր մակարդակ, պայինտպատիկ բնույթի խանգարումներ և այլն: Երեխայի հետ սերտ հոգական կապ հաստատելու անկարողությունը հաճախ իր հիմքում ունենում է մոր զգացմունքների և բնավորության տիատրությունը: Այդպես է լինում այն ծնողների մոտ, ովքեր իրենք մանկության հասակում ենթարկվել են դեպքիվացիայի, կամ չեն կարողացել հաղթահարել իրենց մանկական խնդիրները կամ սեռահասունացման կոնֆլիկտները: Այսպիսի անձինք լինում են ինֆանտիլ, կենտրոնացած միայն սեփական խնդիրների վրա, նրանց բնորոշ է անարդարության և սիրո պակասի զգացմունքները: Երբեմն նրանց մոտ ակնհայտ է և չափազանց կախվածությունը մոր կամ հոր անձից, ընդ որում ժամանակակից շուտ ամուսնանալով նրանք փորձում են ազատվել նրանցից: Նման մայրենի մոտ հետագայում չի բավարարում ջերմությունը երեխայի հետ շփման ժամանակ, իսկ հաճախ նաև նրանք չեն հասկանում երեխայի պարզագույն պահանջմունքները: Բնավորության նման

<sup>1</sup> Դյ. Բուլբի “Привязанность” Москва 2003 г., стр. 26-28

<sup>2</sup> Старостина Л.Д. Роль отца в психическом развитии ребенка // Вестник ЯГУ. 2008г. Том 5. №3. стр. 74-80.

առանձնահատկությունները խանգարում են նաև ծնողների փոխհարաբերություններին, այնպես որ ընտանիքը չի լինում հոգականորեն հազեցած, միավորված, բազակայում է տան ջնրմությունը և ընտանեկան կյանքի մտերմիկությունը:<sup>1</sup>

Վերը նշվածից կարելի է ենթադրել, որ եթե ծնողները երեխային մոտենում են ոչ միայն անտարբերությամբ, անբավարար ուշադրությամբ և հոգական սահնությամբ, այլև նրանց ակնհայտորեն հոգականորեն մերժում են, իրաժարվում են նրանցից, երբեմն նույնիսկ ծայրահեղ դաժանություն են դրսորում, ապա այսպիսի պայմաններում երեխան հայտնվում է հոգական և սոցիալական մեկուսացման մեջ: Չնայած նմանատիպ դեպքերի քանակը մեծ չէ, բայց պետք է օբյեկտիվորեն ընդունել նրանց հնարավորությունը: Զարմանալի է, որ երեխան երբեմն երկար տարիներ ապրելով նման միջավայրում, մնում է առանց պաշտոնական հաստատությունների միջամտության: Դեպքիվային համապատանիշն այսուղև ուղղվում է հաճախ անբացատրելի վարքային ռեակտիվ դրսորումներով:

### Գրականություն

1. Дж. Боулби “Привязанность ” Москва 2003 г.
2. Боулби, Дж. Создание и разрушение эмоциональных связей - 2 -е изд. - М.: Академический Проект, 2005 г.
3. Л. Ф. Обухова, О. А. Шограева "Семья и ребенок: психологический аспект детского развития" Москва 1994г.
4. Куроуский В.Н., Пяткина Г.Н. Материнская депривация и ее структурные компоненты // Вестник Томского государственного педагогического университета. – 2010 г. - № 10
5. Старостина Л.Д. Роль отца в психическом развитии ребенка // Вестник ЯГУ. 2008 г. Том 5. №3.
6. Шпиц, Р.А. Психоанализ раннего детского возраста - М.: ПЕР СЭ; СПб.: Университетская книга, 2001г.
7. internet [/http://psystudy.ru](http://psystudy.ru)

<sup>1</sup> Куроуский В.Н., Пяткина Г.Н. Материнская депривация и ее структурные компоненты // Вестник Томского государственного педагогического университета. – 2010. - № 10.- стр. 141-144